

ՍՈՒՐԻՈՅ ԱԳՆ. «ԱՄՆ ԵՒ ԱՐԵՎՍՏԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐ ԿԱԶՉԱՅԻ ՄԷՉ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՈՒՃԻՐՆԵՐԸ «ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ» Կ'ԱՆՈՒՄՆԵՆ»

Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը հանդէս եկաւ հաղորդագրութեամբ, շեշտելով, որ Իսրայէլ մարդկութեան դէմ ոճիր մը եւս գործեց՝ Կազգայի ճապարհա հատուածը հրթիռակոծելով, որուն հետեւանքով աւելի քան 400 նահատակ եւ հարիւրաւոր վիրաւորներ արձանագրուեցան:



Նախարարութիւնը աւելցուց. «*Իսրայէլեան ոճիրները ամբողջ աշխարհին կը վերոյիշեցնեն 40-50-ական թուականներուն Տէր Եասիւնի եւ Զաֆար Զասեմի մէջ տեղի ունեցած ջարդերը, իսկ ԱՄՆ եւ արեւմուտեան երկիրները քստմնելիօրէն իսրայէլեան ոճիրները «ինքնապաշտպանութիւն» կ'անուանեն, ինչ որ մարդասպան իսրայէլը կը խրախուսէ բնակարաններ եւ հիւանդանոցներ հրթիռակոծել»:*

Նախարարութիւնը աւելցնելով ըսաւ, որ Սուրիան անգամ մը եւս կոչ կ'ուղղէ արդար ժողովուրդներուն ուժեղացնելու իրենց պայքարը իսրայէլեան ոճիրներուն դէմ, որովհետեւ անոնք շարունակուելու պարագային մարդկային ժառանգութիւններ պիտի անհետանան:

ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՉ ԶՅՐ ԲԻՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉԸ

Երկուշաբթի, 30 Յոկտեմբեր 2023-ին, Արամ Ա. Վեհափառ Յայրապետին այցելեց ՅՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանը՝ ընկերակցութեամբ Բիւրոյի անդամ դոկտ. Մկրտիչ Մկրտիչեանի:



Հանդիպման ընթացքին քննարկուեցան Յայաստանի ներքին կացութեան, Արցախի տագնապին հետեւանքներուն եւ Սփիւռքին առնչուած շարք մը հարցեր:

ՊԱԻԹ ԻՇԽԱՆԵԱՆ ՊԱՔՈՒԷՆ 2 ԱՆԳԱՄ ԿԱՊ ԶԱՍՏԱՏԾ Ե ԶԱՐԱԶԱՏՆԵՐՈՒՆ ՇԵՏ

Ատրպէյճանի կողմէն գերեզարուած Արցախի Ազգային Ժողովի նախագահ Դաւիթ Իշխանեան Պաքուէն 2 անգամ կապ հաստատած է հարազատներուն հետ:



Որդիին փոխանցումին համաձայն, հայրը առաջին անգամ 10 Յոկտեմբերին իրենց հեռաձայնած է, 2-րդ անգամ՝ 13 Յոկտեմբերին:

«*Ըսաւ, որ բնական է ամէն ինչ, ուրիշ ոչ մէկ բան»*, պատմեց Արմէն Իշխանեան՝ տեղեկացնելով, որ 19 Յոկտեմբերին Արցախի Ազգային Ժողովի նախագահին

այցելած են նաեւ Կարմիր Խաչի ներկայացուցիչները: Միջազգային կազմակերպութեան անդամները հարազատներուն փոխանցած են, որ Իշխանեանի վիճակը բնական է: Դաւիթ Իշխանեան Լեռնային Ղարաբաղի 3 նախկին նախագահներուն հետ գերեզարուեցաւ Յոկտեմբերի սկիզբը: Պաքուն գայն մեղադրած է ահաբեկչութեան յանցանքով: Իշխանեան, ինչպէս եւ նախկին նախագահները 4 ամիսով կալանաւորուած են:

ԱՐՅԱՆԻ ՈՒ ԿԱԶՉԱՅԻ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐՈՒՆ ԶՕՐԱԿՅԱԿԱՆ ԶԱԲԱԸ

Ձեռնարկի Պատգամաբերներ. «Արցախի եւ Կազգայի Ժողովուրդները Յեղասպանութեան եւ Տեղահանման Նոյն Ոճիրներուն Կ'Ենթարկուին, Նոյն Ծրագրողներուն Ձեռագրով»

Հալէպի հայ եւ արաբ, քրիստոնեայ եւ իսլամ համայնքներու ներկայացուցիչներն ու ժողովուրդի գաւակները Արցախի եւ Կազգայի գօրակցական միացեալ հաւաքին ընթացքին շեշտեցին, որ նոյն թշնամական ծրագրեալ ոճիրներուն կ'ենթարկուին արդարութեան ու հայրենիքի համար պայքարող հայ, սուրիացի եւ պաղեստինցի ժողովուրդները:



Արդարեւ, Կիրակի, 29 Յոկտեմբերին, Սուրիոյ Յայ Դատի Կեդր. Մարմինին կազմակերպութեամբ, Բերիոյ Յայոց Թեմի Առաջնորդին հովանաւորութեամբ տեղի ունեցած գօրակցական հաւաքին ներկայ էին քրիստոնեայ եւ իսլամ կրօնապետներ, սուրիական կուսակցութիւններու, պաղեստինեան «Զուտա» գումարտակի, պաղեստինեան ապստամբութեան «Ֆաթի» շարժումի պատասխանատուներ, Հալէպի մէջ Իրանի հիւպատոսին խորհրդակցանք, Սուրիոյ խորհրդարանի, հալէպահայ կազմակերպութիւններու, միութիւններու եւ ազգային իշխանութեան ներկայացուցիչներ, Հալէպի կրօնական կալուածներու տնօրէնը, Արաբ Գրողներու Միութեան նախագահը, բարեսիրական միութիւններու ներկայացուցիչներ, դատախազներ, Հալէպի պետական համալսարանի դասախօսներ եւ հոծ բազմութիւն մը:

Զօրակցական հաւաքը սկսաւ Սուրիոյ քայլերգով, ապա հանդիսավար Ամէր Տրաու ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան յոտնկայս յարգելու Արցախի եւ Պաղեստինի նահատակներուն յիշատակը ու շեշտեց, որ գօրակցական այս հաւաքով կը հաստատենք արդար պայքարը արցախահայութեան եւ Կազգայի ժողովուրդներուն. այն ժողովուրդներուն, որոնք տասնամեակներ շարունակ ենթակալ դարձան բռնարարքներու՝ իրենց պատմական հողին վրայ:

Այնուհետեւ «Զուտա» գումարտակի խօսքը ուղղեց գումարտակի քաղաքական թելի պատասխանատու Ատէլ Ապտուլ Հաք: Ան դատապարտեց միջազգայնօրէն ծրագրուած ահաբեկչութիւնը, որ կը միտի ազգեր բնաջնջել քաղաքական նպատակներու համար, աւելցնելով որ Թուրքիան Է՛ր ու կը մնայ գործիքը մեր տարածաշրջանին մէջ ահաբեկչական ծրագիրներու իրագործման: Փաստօրէն Յայոց Յեղասպանութիւնը վկան է այս իրողութեան, ու ահա Թուրքիան, այսօր, Ատրպէյճանի ձեռամբ՝ կազմակերպուած ցեղասպանութիւն կը հովանաւորէ Արցախի մէջ, Արցախի բնակչութիւնը բռնի տեղահանութեան կ'ենթարկէ եւ շրջանի ժողովրդագրական պատկերը կը փոխէ: Եթէ մանրակրկիտ կերպով դիտենք նման երեւոյթներ աշխարհի մէջ ընդհանրապէս, պիտի տեսնենք, թէ ուր որ ահաբեկչութիւն գոյութիւն ունի, հրահրուած է Միացեալ Նահանգներու եւ սիոնիստական շարժումին կողմէ, երուպական կարգ մը երկիրներու եւ յատկապէս Թուրքիոյ մեղսակցութեամբ:

«Սակայն իրաւունքը չի՛ մեռնիր, եթէ պահանջատեր ունի: Եւ ահաւասիկ «Աքսայի հեղեղ»-ը աստուածային նախախնամութեամբ կու գայ անկիրատեսական համարելու Իսրայէլի անպարտելի ըլլալու տեսութիւնը եւ թղթ-»

Շար.՝ 1, 2 12 >

Խմբագրական

ՈՒԺԵՐՈՒ ԼԱՐՈՒՄ, ԾԻԳԵՐՈՒ ՅԱՄԱԴՐՈՒՄ

Սուրիա պատերազմի ազդեցությունն տակաւ դուրս կու գայ, միեւնոյն ատեն, սակայն, տարածաշրջանի կայունութիւնը իսրայելա-պաղեստինեան հակամարտութեան լոյսին տակ կրկին բխրուն կը դառնայ:

Այս բոլորը իրենց բացասական անդրադարձը կ'ունենան տարածաշրջանի երկիրներու թէ՛ տնտեսութեան, թէ՛ ապահովութեան վրայ, մանաւանդ նկատի ունենալով որ արաբական երկիրները, յատկապէս Սուրիան եւ Լիբանանը ինչպէս միշտ, այս անգամ եւս զօրավիճ կը կանգնին պաղեստինեան ազգային դիմադրութեան՝ յանուն պաղեստինեան դատի արդար լուծման:

Յստակ են Սուրիոյ ու Լիբանանի ապահովութեան սպառնալու իսրայելի յաճախակի փորձերը, միւս կողմէ սակայն, սուրիական կողմն ալ իր յստակ թիրախները ընտրելով կը շաւնայ ե՛ւ իր հողերը բռնագրաւող կողմերուն դէմ պայքարիլ, ե՛ւ արաբական ազգային ճակատին զօրավիճ կանգնող իր կեցուածքը պահել Նոյն վճռակամութեամբ, առանց զիջելու, հակառակ երկրին դիմագրաւած բազում դժուարութիւններուն:

Այս բոլորը բնականաբար իրենց ազդեցութիւնը կ'ունենան ժողովուրդին տրամադրութեան, տնտեսական վիճակին վրայ ու կրկին շատերուն աչքերը կ'ուղղուին ապահով երկիրներ արտագաղթելու ճանապարհ, ինչ որ իր անդրադարձը կ'ունենայ ազգային, համայնքային մեր կեանքին վրայ:

Ներկայ փուլը մեզ կը պարտաւորեցնէ լարել ուժերը, միացնել ճիգերը, վանել յուսահատութիւնը ու աշխատանքով փորձել յաղթահարել տնտեսական, կազմակերպական, ապահովական եւ այլ դժուարութիւններ, մինչեւ որ երկիրը վերջնականապէս հասնի խաղաղութեան ափ ու տնտեսութիւնը բարելաման նշոյլներ ցոյց տայ:

Միջին Արեւելքի եւ Հարաւային Կովկասի տարածաշրջանները կ'եռան ամենօրեայ զարգացումներով, նաեւ սպառնալիքներով, հետեւաբար ալ ներկայ դժուարութիւնները կեցութեան վայրի փոփոխութեամբ վերջ պիտի չգտնեն, որովհետեւ տագնապները ընդլայնելու նշոյլներ ցոյց կու տան:

Այս կացութիւնը նուազագոյն վնասներով յաղթահարելու կարելոր միջոցներէն մէկը յաւելեալ ճիգի ու աշխատանքի ներդրումն է մեր առօրեային մէջ՝ անձնական, ազգային թէ միութեանակալ: Աշխատանքին չափ ալ կարելոր է ճիգերու միացումը, զիրար նեցուկ կանգնիլն ու նոր մտայղացումներով համայնքին կայուն կեանքի պահպանումը:

Միատեղ ճիգերուն կողքին անհրաժեշտ է խտացնել որոշ աշխատանքներ՝ մարդուժի խնայողութեան համար, տնտեսելով առաջ տանիլ կազմակերպչական աշխատանքներ ու ձեռնարկներ՝ մինչեւ երկրի ներկայ կացութեան բարելաւում ու մասնակից դառնալ ազգային ու համայնքային կեանքի տարբեր աշխատանքներուն, դուրս գալով կրաւորական մօտեցումներէն:

Սուրիահայութիւնը անցնող տարիներուն շատ ծանր կացութիւններ յաղթահարեց համբերատար ու կազմակերպ իր աշխատանքին շնորհիւ: Այս փուլը եւս կրնանք յաղթահարել համախմբուած ու ծրագրեալ աշխատանքով ու զիրար նեցուկ կանգնելով:

Մեր միութիւններն ու դպրոցները առաջնորդողները այս տրամաբանութեամբ գործելով յուսահատութեան ալիքէն զերծ կրնան պահել մեր ժողովուրդի զաւակները ու աշխատանքի դրական մթնոլորտ ստեղծելով կրնան կեդրոնանալ որակի բարելաւման վրայ՝ թիւի նօսրացման դիմաց գէթ նոր որակով օժտելու աշխատանքի տարբեր մարզերը:

«Գ.»

-Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ խորհրդակցական նիստ մը ունեցաւ Սուրիոյ Արտաքին գործոց Նախարարութեան դիւանագիտական հատուածի անդամներուն հետ, որուն ընթացքին լուսարձակի տակ առաւ տեղի ունեցած ռազմական եւ քաղաքական դէպքերը, ստորագրուած դաշինքները, շարունակական բախումները եւ այլն:



Նախագահ Ասատ շեշտեց, որ վաղուց արդէն ամերիկեան քաղաքականութեան եւութիւնը ռազմական սաստկացում եւ թոհուրոս ստեղծելն է, իրմէ ետք Նոյն քաղաքականութիւնը կ'որդեգրէ Եւրոպան, ինչ որ ոչ միայն բարոյական անկումի մասին կը վկայէ, այլեւ՝ մտաւորական:

Նախագահ Ասատ աւելցուց, որ եւրոպական լրատուամիջոցներ Կազգայի պատկերը մակերեսային եւ ցեղային խտրականութեան դիտանկիւնէն կը փոխանցեն մէկ կողմէ, իսկ միւս կողմէ՝ ապատեղեկատուութիւն կը տարածեն: Ապա շեշտեց, որ Կազգայի մէջ տեղի ունեցածը արաբական գիտակցութեան եւ խիղճին մէջ պաղեստինեան դատը իր իսկական դիրքին վերադարձուց:

-Սուրիոյ արտաքին գործոց նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատ իր ռուս պաշտօնակից Սերկէյ Լաւրովի հետ հեռաձայնային հաղորդակցութեամբ խորհրդակցեցաւ տարածաշրջանի վերջին զարգացումներուն եւ Կազգայի դէմ իսրայելեան գրոհին շուրջ:



Կողմերը անդրադարձան նաեւ երկու երկիրներու յարաբերութեան զարգացման կարելորութեան շուրջ:

Անդրադառնալով Կազգային, նախարար Մըքտատ յայտնեց, որ Կազգայի մարդասիրական իրավիճակը օր ըստ օրէ աւելի վտանգաւոր կը դառնայ: Նախարար Մըքտատ կարելոր համարեց միջազգային ուժերու դերակատարութիւնը իսրայելեան գրոհը կասեցնելու եւ մարդասիրական օգնութիւններ հասցնելու Պաղեստինի ժողովուրդին:

Իր կարգին Լաւրով շեշտեց, որ Ռուսիա կը մերժէ իսրայելեան յարձակումները սուրիական հողերուն եւ հաստատութիւններուն վրայ, լուսարձակի տակ բերելով Կազգայի մէջ ռազմական գործողութիւններու դադրեցման անհրաժեշտութիւնը, կանխելու համար տարածաշրջանին լարուածութեան սրումը:

Լաւրով միջազգային հանրութեան կոչ ուղղեց Կազգայի ժողովուրդին մարդասիրական օգնութիւնները հասանելի դարձնելու եւ անմիջապէս դադրեցնելու պատերազմը:

-Իսրայել հրթիռակոծեց հարաւային Լիբանանի կարգ մը շրջանները՝ ֆոսֆոր պարունակող միջազգայնօրէն արգիլուած հրթիռներով:



Լիբանանեան ազգային լրատու գործակալութիւնը յայտնեց, որ Ռամիս, Աիթա ալ Շաապ եւ Լապպուլնէ շրջանները հրթիռակոծման ենթարկուեցան լիբանանեան-պաղեստինեան սահմանային շրջանին մէջ գտնուող իսրայելեան կեդրոններէ:

-«ԻՆՆՍԵՖ» յայտարարեց, որ Կազգայի դէմ իսրայելեան գրոհին 4-րդ շաբաթը, Կազգա հազարաւոր պաղեստինցի փոքրիկներու գերեզմանատունը դարձաւ:



ԻՆՆՍԵՖ-ի բանբեր Ճէյմս Էլտըր ժընեւի մէջ մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտնեց, որ Կազգա դժոխք դարձած է բոլորին համար: Կազգայի վրայ իսրայելեան յարձակումներուն առաջին օրէն իսկ ԻՆՆՍԵՖ յայտարարեց, որ ռազմական գործողութիւնները անմիջապէս պետք է դադրին եւ մարդասիրական օգնութիւնները պետք է հասանելի դառնան պաղեստինեան ժողովուրդին, շեշտելով, որ ինչպէս շատեր Նոյնպէս ալ ԻՆՆՍԵՖ կոչ կ'ուղղէ անմիջապէս դադրեցնելու փոքրերու սպանութիւնը:

Ան աւելցուց, որ նահատակներուն թիւերը սարսափելի են եւ ներկայ տուեալներուն համաձայն Կազգայի մէջ աւելի քան 3450 փոքրիկ զոհուած է: Այս թիւը օր ըստ օրէ կը բարձրանայ:

-Պաղեստինեան ազգային դիմադրութիւնը բարձր գնահատեց Չիլիի եւ Զոլոմպիայի իսրայելէն իրենց դեսպանները յետս կոչելու կեցուածքը՝ որպէս բողոք Կազգայի դէմ իրագործած գրոհին եւ ոճիրներուն:



Դիմադրութիւնը հաղորդագրութեամբ յայտնեց. «Կը շեշտենք, որ պատմութիւնը իր էջերուն մէջ պիտի արձանագրէ իսրայելեան գրոհը մերժող եւ մեր դատին զօրակցող բոլոր պետութիւններուն հպարտալի կեցուածքը»:

Դիմադրութիւնը աւելցուց. «Կոչ կ'ուղղենք բոլոր պետութիւններուն, յատկապէս՝ արաբական եւ իսլամական, որոնք իսրայելի հետ իրենց յարաբերութիւնները բնականացուցած են, անմիջապէս խզելու զանոնք եւ յետս կանչելու իրենց դեսպանները»:

Լուրեր Հայաշխարհին

ՇԱՀՐԱՄԱՆԵԱՆ. «ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԿՍԵԼԷ ԺԱՄԵՐ ԵՏՔ ՀԱՍԿՅԱՅ, ՈՐ ՄՆԱՅԱԾ ԵՆԵ ՄԻՆԱԿ. ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՂՄԸ ԴԻՏՈՐԴԻ ԴԵՐԻՆ ՄԵՋ ԷՐ»

«Ռազմական գործողությունները սկսել է ժամեր ետք հասկացայ, որ մնացած ենք մինակ. ռուսական կողմը դիտորդի դերին մեջ էր»:



«19 Սեպտեմբերին ես առաջուտեան կը գտնուէի ռուս խաղաղապահներու հրամանատարին մօտ, առաջին ազդակը, որ կարելի է սկսին ռազմական գործողությունները, եղած է այն, որ Շուշիի գրահասպատի յուշարձանին մօտ, ուր կայ 2 յենակետ՝ ռուսական ու ատրպեյճանական, ատրպեյճանական յենակետէն մօտեցած են ռուսական յենակետին

եւ զգուշացուցած, որ թաքցուցէք անձնակազմը, շուտով պիտի աշխատի հրետանին: Այդ փաստը մենք ներկայացուցած ենք ռուս խաղաղապահներու հրամանատարին. անոնք այլ տեղեակ էին ատոր մասին, եւ ճշդումներէ ետք հաստատուած է այդ փաստը: Ինձի համար պարզ եղած է, որ որոշ ժամանակ ետք հաւանական է սկսի ռազմական գործողությունը: Արդէն տեսական ժամանակ մեր զինեալ ուժերը ու ուժային կառույցները բարձր մարտական վիճակի բերուած էին, համապատասխան հրահանգները տրուած էին՝ ներառեալ քաղաքացիական պաշտպանութեան հետ կապուած», նշեց Շահրամանեան՝ աւելցնելով, որ աշխատասենեակ բարձրանալէն կէս ժամ ետք հրետակոծությունը սկսած է, գրեթէ բոլոր շրջանները կ'ենթարկուէին աշխուժ հրետակոծութեան:

«Ռազմական գործողությունները սկսել է յետոյ ժամեր ետք ես հասկցած եմ, որ մենք մինակ ենք ատրպեյճանական այդ նախաշարժակումին դէմ: Ռուսական կողմը դիտորդի կարգավիճակին մեջ էր, մենք պետք է ինքնորոյն ունակ ըլլայինք կարգաւորելու մեր հարցերը: Պաշտպանութեան բանակը այլ ուժային կառույցներու, նաեւ՝ մեր բնակչութեան հետ միասին սկսած է ռազմական գործողություններու պատասխան գործողությունները եւ նոյնիսկ այդ գործողություններուն շնորհիւ էր, որ կարելի եղաւ ատրպեյճանական կողմէն բանակցություններու սկսիլ: Մեզի համար պարզ էր, որ անհրաժեշտ է կանգնեցնել ռազմական գործողությունները, քանի որ ուժերը անհամեմատ էին եւ ինչքան երկար շարունակէինք, այդքան կ'ունենայինք զոհեր եւ կորուստներ», նշեց Շահրամանեան՝ աւելցնելով, որ իր նպատակը, իբրեւ Արցախի նախագահի, կը կայանար անոր մէջ, որ ըստ կարելւոյն արագ կանգնեցուէին ռազմական գործողությունները, եւ խուսափէինք անոր շատ զոհերէ:

ԼՂ-ԷՆ ԲՈՒՆԻ ՏԵՂԱՆՈՒԿԸ 16.371 ԱՇԱԿԵՐՑ ԿԸ ՅԱՃԱԽԵ ԳՊՐՈՑ. 52 ԱՐՃԱԽՅԻ ՌԻՍՈՒՅԻՉ ԱՐԴԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՅԱԾ Է

ԼՂ-Էն բռնի տեղահանուած 16 հազար 371 աշակերտ Հայաստանի մէջ կը յաճախէ դպրոց, որուն 5.185-ը՝ Երեւան: Այս մասին 31 Յոկտեմբերին, կառավարութեան մարդասիրական կեդրոնի ճեպագրոյցին ընթացքին տեղեկացուցած է կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարզանքի նախարարի տեղակալ Արաքսիա Սուաջեան:



Անոր համաձայն, աշխատանքի համար դիմած է տեղահանուած 126 ուսուցիչ, որոնց 52-ը արդէն գործուղուած է: Փոխնախարարը տեղեկացուցած է, որ մարզային դպրոցներուն մէջ աշխատանքի անցնելու պարագային ուսուցիչները կ'ունենան 30 տոկոս յաւելումի կարելիութիւն, իսկ Տաւուշ, Իջեւան, Նոյեմբերեան եւ Բերդ համայնքներու դպրոցներուն ու Գեղարքունիքի մարզի Վարդենիս եւ Ծամբարակ համայնքներու դպրոցներուն մէջ, բացի 30 տոկոս յաւելումներէն, կը ստանան նաեւ 50 հազար դրամ յաւելում:

Աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարի տեղակալ Աննա Ժամկոչեան ներկայացուցած է 40+10 հազարական դրամ ընկերային աջակցութեան ծրագիրի նոր պայմանները, որոնք կը գործեն Նոյեմբերէն: Շահառու չեն հանդիսանար բոլոր այն անձինք, որոնք կ'ենթարկուին կ'ապահովուի պետական միջոցներով:

ՍԱՄՈՒԷԼ ՇԱՀՐԱՄԱՆԵԱՆ ԸՆԴՈՒՆԱԾ Է ԵՐՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՖՐԱՆՍԱՅԻ ՊԱՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՍԱԿԱՆ «ReconqUte» ԿՈՒՍԱԿՆՈՒԹՅԱՆ ԳՆԱԿԸ ԳԼԽԱՎՈՐՈՂ ՄԱՐԻՈՆ ՄԱՐԵՉԱԼԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ԿԱՏՈՒԻՐԱԿՈՒԹՅԱՆ

Արցախի նախագահ Սամուէլ Շահրամանեան 30 Յոկտեմբերին ընդունած է Երոզական խորհրդարանի ֆրանսացի պատգամաւոր Նիքոլաս Պեյի, իտալացի պատգամաւոր Վինչենցո Սոֆոյի եւ Երոզական խորհրդարանի յառաջիկայ ընտրութիւններուն ֆրանսական «ReconqUte» կուսակցութեան ցանկը գլխաւորող Մարիօն Մարեչալի գլխաւորած պատուիրակութիւնը:



Հանդիպման մասին իր ֆէյսպուքեան էջին գրառում կատարած է ֆրանսացի պատգամաւոր Մարիօն Մարեչալ՝ կարելորելով Արցախի նախագահ Սամուէլ Շահրամանեանի հետ հանդիպումը: Պատգամաւորը շեշտած է, որ Թուրքիոյ կողմէ աջակցութիւն ստացող Ատրպեյճան կը միտի բնաջնջել հայերն ու ոչնչացնել քրիստոնեւորութեան հետքը:

Հանդիպման ընթացքին քննարկուած են Ատրպեյճանի յարձակման հետեւանքով ստեղծուած իրավիճակին առնչուող հարցեր:

ԵՐՈՒՄՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ԾԱՆՈԹԱՅԱԾ ԵՆ ԱՐՃԱԽԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԵՐՈՒՆ

29-30 Յոկտեմբերին հայ ժողովուրդին իրենց աջակցութիւնը յայտնելու եւ Արցախէն բռնի տեղահանուած հայերուն հետ հանդիպումներ ունենալու համար Հայաստան կը գտնուէր Երոզական խորհրդարանի ֆրանսացի պատգամաւոր Նիքոլաս Պեյի, իտալացի պատգամաւոր Վինչենցո Սոֆոյի եւ Երոզական խորհրդարանի յառաջիկայ ընտրութիւններուն ֆրանսական «ReconqUte» կուսակցութեան ցանկը գլխաւորող Մարիօն Մարեչալի գլխաւորած պատուիրակութիւնը:



Հայաստան կատարած այցելութեան ընթացքին պատուիրակութեան անդամները հանդիպումներ ունեցած են 33 ընտրուած պաշտօնեաներու եւ քաղաքական առաջնորդներու հետ, որոնց

հետ քննարկուած են ստեղծուած իրավիճակի եւ Ատրպեյճանի Արցախ ներխուժման գծով Երոզական տարբեր պետութիւններու արձագանգներուն հետ առնչուող հարցերու լայն շրջանակ:

Մասին եւ Վարդենիս քաղաքներուն մէջ պատուիրակութեան անդամները հանդիպած են Արցախէն բռնի տեղահանուած հայ ընտանիքներուն, լսած անոնց պատմութիւնները, ծանօթացած հարցերուն:

Պատուիրակութեան անդամները մտադիր են շարունակել Երոզական հարթակներու վրայ բարձրաձայնումը Արցախի ժողովուրդի իրաւունքներուն եւ ջանքեր գործադրել, որպէսզի Երոզական Միութիւնը դիւանագիտական եւ տնտեսական գործուն քայլեր ձեռնարկէ ատրպեյճանական զինուորական յարձակումներու զսպումին եւ հայ ժողովուրդի զաւակներուն շահերուն պաշտպանութեան գծով:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Արամեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԳԱԻԹ ԱՐԱՄԵԱՆԻ

մահուան սուգին:

Հանգուցեայի բառասուկի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 5 Նոյեմբեր 2023-ին, յաւարտ Ս. եւ Աննահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, Վիլլաներ - Հայէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցոյ ԱՍԺ Տան «Նիւ Սպիտակ» ճաշարանը:



ՄԻՋԻՆ ՈՒԺԵՐԸ ԻՆՉՊԵՍ ԿՐՆԱՆ ԱԶԴԵԼ ԻՍՐԱԵԼ-ՊԱՂԵՍԻՆ ՅԱԿԿԱՍԱՐՏՈՒԹԵԱՆ ԿՐԱՅ

Արարատ Կոստանեան*
Անգլերեն թարգմանեց
Չարմիկ Պողիկեան

Աշխարհի ներկայ բազմաբեռն համակարգը միջին ուժերուն կարելիութիւն կու տայ գործուն դերակատարութիւն ունենալու համաշխարհային դիւանագիտութեան մէջ:

Անլոյծ մնացած հակամարտութիւններ, այնպէս ինչպէս՝ Իսրայէլ-Պաղեստինեան հակամարտութիւնը, տասնամեակներ շարունակ Միջին Արեւելքը վերածեցին մշտական լարուածութեան, բախումներու եւ գերտերութիւններու ուղղակի կամ անուղղակի միջամտութեան դաշտի:

Այս երեւոյթը տուեալ հակամարտութիւնը, այս պարագային՝ պաղեստինեանը, հեռու պահեց յաճախ խաղաղ կարգաւորման հասնելու գործընթացէն եւ անելի բարդացուց Միջին Արեւելքի կայունութեան հեռանկարը:



Գերպետութիւններու կատարի մրցակցութիւնը առաւելաբար երեւելի դարձաւ պաղ պատերազմի ժամանակաշրջանին: Իսկ երբ պաղ պատերազմը աւարտին կը հասնէր, մրցակցութիւնը թեւակոխեց մէկայլ փուլ, այս անգամ Միացեալ Նահանգներուն, որպէս յաղթող կողմի՝ եւ ԱՄՆ-ի կողմէ պարտադրուող այսպէս կոչուած՝ ազատականութիւնը մերժող հակառակորդ կողմին միջեւ:

Համաշխարհային նման լարուածութեան պայմաններուն մէջ ակնյայտ էր, որ պաղեստինա-իսրայէլեան հակամարտութեան արդարացի լուծման հասնիլը անկարելի դարձած էր գերտերութիւններու մնայուն մրցակցութեան հետեւանքով:

Անկախ այս իրողութենէն, իրավիճակը կը վատթարանար Միացեալ Նահանգներու կողմէ կազմակերպուած միջնորդութիւններու շարունակական ձախողութեան հետեւանքով, ուր առաջնահերթութիւնը կը տրուէր Իսրայէլի պահանջներուն եւ կ'անտեսուէր Պաղեստինի ճանաչումը որպէս պետութիւն:

Բազմաբեռն աշխարհի գոյաւորումը յոյս կը ներշնչէ

Յետաքրքրականը այն է, որ ներկայիս համաշխարհային բազմաբեռն համակարգը կարելիութիւն կու տայ միջին ուժերուն գործուն դերակատարութիւն ունենալու համաշխարհային դիւանագիտութեան խաղաղութեան գործընթացին մէջ:

Չարմանալիօրէն, միջին տերութիւններու դերը սահմանափակուած է կա՛մ այն ազգերով, որոնք կը պահանջեն արտաքին անկախ քաղաքականութիւն՝ երեւոյթ մը, որ հաշտ աչքով չի դիտուիր համաշխարհային կեդրոնացուած դիւանագիտութեան մէջ, կա՛մ կը սահմանափակուի այնպիսի դերակատարներով, որոնք կը ջանան իրականացնել գերտերութիւններու մեծ-նախագիծերը՝ օգտուելով, «տնտեսական զարգացման» պիտակին տակ, գերտերութիւններու հետ գործակցութեան կարելիութիւններէն:

ՀԱՄԱՍ-ի վերջին յարձակումը հնարաւորութիւն կը համարուի ոչ միայն գերտերութիւններու համար՝ որպէս միջնորդ Պաղեստինի եւ Իսրայէլի միջեւ խաղաղ բանակցութիւններու կազմակերպման, այլեւ միջին ուժերու համար, ինչպիսիք են՝ Ինտոնեզիան, Սեւտական Արաբիան, Յնդկաստանը եւ Իրանը, կարելի դեր խաղալու Պաղեստինի պետութեան ճանաչման գործընթացին մէջ՝ իրենց դիրքորոշումները պաշտօնապէս յայտարարելէ անելի կառուցողական միջոցներով:

Աւելին. վերոնշեալ միջին ուժերը կարելիութիւն ունին ստեղծելու համախոհութիւն մը, որ կը հրաւիրէ բոլոր կողմերը մասնակցելու այս երկարատեւ հակամարտութեան հանգուցալուծման, որպէսզի հասնին արդար արդիւնքի, ուր հակամարտութեան բոլոր կողմերու իրաւունքները հաւասարապէս ընդունելի կը դառնան:

Նկատի առնելով, որ վերոյիշեալ բոլոր երկիրները պաշտօնապէս յայտարարած են, թէ Պաղեստինը կը ճանչնան որպէս հակամարտութեան կարգաւորման կարելի բանալիներէն մին, *հեճաւորման* ազդեցիկ ռազմավարութիւնը, (hedging strategy) զոր կը վարէր միջին տերութիւններու մեծամասնութիւնը՝ երկու մըրցակից բեռներու միջեւ (արեւմտեան եւ հակաարեւմտեան) հաւասարակշռութիւն պահելու, պետք է համարել արդար լուծումներու հասնելու մարտավարական հիմնական միջոց:

Աւելին. միջին ուժերու կողմէ կազմակերպուած համախոհութիւնը կրնայ վերածուիլ նաեւ անելի լայն շարժումի՝ հասնելու պաղեստինա-իսրայէլեան հակամարտութեան արդար լուծման:

Տակաւին միջին ուժերու կողմէ ի մի բերուած նման ներառական միջազգային դիւանագիտութիւն կրնայ մրցակից գերտերութիւններու միջեւ հեռաւորութիւնը մեծցնել, վերակազմաւորելով ոչ-դաշնակցային բեռնը՝ անելի լայն իմաստով:

Այլ խօսքով՝ միջին ուժերու հեճաւորման ռազմավարութեամբ յառաջ մղուող բոլոր կողմերու արդիւնաւետ դիւանագիտութեան արդիւնաւետութիւնը կը բարձրացնէ այդ ռազմավարութեան կարելիութիւնը միջազգային յարաբերութիւններու մէջ, որպէսզի գերտերութիւնները պահպանեն սթաթուս քուօ-ն եւ իրենց առճակատումները չվերածեն լայնամասշտապ կամ զիրար ոչնչացնող ներառական-հիպոթիտային պատերազմի:

Ուրբանական պատերազմը ցոյց տուաւ, որ մրցակից գերտերութիւնները չեն վարանիր բանալու Նոր ճակատներ, որոնք կրնան տարածաշրջանային պատերազմները համաշխարհայինի վերածել:

Այլ խօսքով՝ համաշխարհային ներկայ իրավիճակը ցոյց կու տայ, որ միջին ուժերը կ'օգտուին գերտերութիւններու կողմէ առաջարկուող մեծ-նախագիծերէն, իսկ գերտերութիւնները արդար լուծման հասնելու համար կարիք ունին միջին ուժերու յառաջադէմ դերակատարութեան, որ պիտի ընդլայնէ մրցակից երկբեռն գերտերութիւններու միջեւ եղած յարաբերական կայունութեան տարածութիւնը:

Աւելին. միջին ուժերու համախոհութեան կողմէ իրականացուող համաշխարհային ներառական դիւանագիտութիւնը պիտի ստիպէ Միացեալ Նահանգներն ու Իսրայէլը՝ փոխել իրենց անզիջում դիրքորոշումը Պաղեստինը ճանչնալու գծով՝ ընդունելով, որ պաղեստինցիներուն իրաւունքները նոյնպէս պետք է ճանչցուին՝ կայուն խաղաղութեան հասնելու համար:

Ամերիկեան նման արտաքին քաղաքականութիւն կրնայ բարձրացնել պաղեստինցիներուն արդար լուծման հասնելու կարելիութիւնը, դադարեցնելով տարածաշրջանային հիպոթիտային պատերազմի հաւանականութիւնը մէկ կողմէ Միացեալ Նահանգներուն եւ անոր տարածաշրջանային ու համաշխարհային դաշնակիցներուն, միւս կողմէ՝ հակաարեւմտեան պլոքին միջեւ:

Սղեխը՝

Asia Times

<https://asiatimes.com/2023/10/how-middle-powers-can-impact-the-israel-palestine-conflict/>

*Արարատ Կոստանեան Ինտոնեզիոյ Միջազգային Իսլամական Համալսարանի դոկտորական թեկնածու է եւ «Յանուն Արդար Աշխարհի Միջազգային Շարժում»-ի անդամ: Ան նաեւ նախկին գիտաշխատող է Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Արեւելագիտութեան համալսարանին մէջ:

ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՆՈՒՐԻՅԱՆ ԳՄՏԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՆԱՄԱԶԳԱՅԻՆ ՆԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԻՆ ԵՒ ՆՈՐ ՆՆՋԵՅԵԱԼՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Կիրակի, 29 Նոյեմբեր 2023-ի առաւօտուն, հանդիսապետութեամբ՝ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Ս. Մակար Սրբ. Եպս. Աշգարեանի, Սրբ. Զառանկից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ Սուրբ եւ Ամմահ Պատարագ մատուցուեցաւ:



Օրուան պատարագիչն էր Արժ. Ս. Գառնիկ Զինյ. Չափանեան:

Օրուան խորհուրդը հաւատացեալներուն ուղղեց Առաջնորդ Սրբազան Հայրը, պարզաբանելով Ս. Խաչի գիւտի տօնին իմաստը, բնաբան

ունենալով Պօղոս առաքեալի Կորնթացիներուն գրած Ա. Նամակին առաջին գլխուն 18-25 համարները:

Սրբազան հայրը դիտել տուաւ, որ կորուստի ճամբուն մէջ գտնուողներուն համար խաչի մասին քարոզութիւնը յիմարութիւն կը թուի, մինչ փրկութեան ճամբուն մէջ գտնուողներուն համար Տիրոջ խաչաւիայտը Աստուծոյ զօրութիւնն է: Այլ խօսքով, անոնք որոնք աշխարհիկ չափանիշերով կ'առաջնորդուին՝ չեն կրնար ըմբռնել աստուածային ճշմարտութիւնները, որովհետեւ զուրկ են երկնային եւ բարոյական սկզբունքներէն: «Քրիստոս աշխարհ եկաւ եսապաշտ եւ անձնակերտուն վիճակէն դուրս բերելու մեզի, որպէսզի մեր նմաններուն հետ յարգանքով եւ արդարութեամբ ապրինք», անելցուց ան:



Անդրադառնալով ծառայութեան ոգիին, սրբազան հայրը մաղթեց, որ ծառայական սիրոյ

ոգին բոցավառի մեր մէջ, որպէսզի Քրիստոսի օրինակին հետեւելով, Խաչէն ճառագայթող սիրով լեցուած ծառայելք Աստուծոյ, մեր ազգին եւ հայրենիքին:

Պատարագէն ետք, Սրբազան Հօր Նախագահութեամբ Հոգեհանգստեան արարողութիւն կատարուեցաւ,



Համագգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան հին եւ նոր նընջեցեալներու հոգիներուն, ներկայութեամբ՝ Սուրբիոյ Խորհրդարանի երեսփոխան տիար Ժիրայր Րէիսեանի եւ համագգայնականներու:

Սրբազան Հայրը «Հոգևոցն Հանգուցելոց» արթթը բարձրացուց ան Աստուած՝ Համագգայինի հին եւ նոր ննջեցեալներու հոգիներուն խաղաղութեան համար:

Աւարտին, եկեղեցւոյ «Նիկոյ Աղբալեան» սրահէն ներս հոգեւորձ կատարուեցաւ, Համագգայինի Սուրբիոյ Ծրք. Վարչութեան եւ համագգայնականներու ներկայութեամբ, ուր Ծրք. Վարչութեան ատենապետ տիար Ռաֆֆի Սիլվաեան խօսք արտասանեց, որմէ ետք Սրբազան Հայրը փոխանցեց

Թուրքիոյ նուրջ

ԻՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՐԲ ԿԸ ՄԵԿՆԻ ԹՈՒՐԷԻԱ

Իրանի արտաքին գործոց Նախարար Հոսեյն Ամիր Ապտուլահիան Զորեքշաբթի օր այցելեց Թուրքիա՝ քննարկելու տարածաշրջանային հարցեր, այդ կարգին՝ Միջին Արեւելքի մէջ տիրող իրավիճակը: Այս մասին հաղորդագրութիւն գետնողուած է Թուրքիոյ արտաքին գործոց Նախարարութեան համացանցային X հարթակին վրայ:



«Կ'ակնկալուի, որ Թուրքիոյ արտաքին գործոց Նախարար Հաքան Ֆիտան իրանցի գործընկերոջ հետ քննարկէ օրակարգային տարածաշրջանային հարցեր, մասնաւորապէս՝ Պաղեստինի իրադարձութիւնները, ինչպէս նաեւ Թուրքիա-Իրան երկկողմ յարաբերութիւնները», ըսուած է Թուրքիոյ Արտաքին գործոց Նախարարութեան հաղորդագրութեան մէջ:

ԹՈՒՐԷՐԸ ԱՄԱՐԱՍԻ ՄԵՋ ՍՐԲԱՊՂՏԱԾ ԵՆ ՀԱՅՈՑ ԱՌԱՅԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉԻ ԹՈՒԱՆ ՏԱՊԱՆԱՔԱՐԸ

Թուրքերը Ամարասի մէջ պղծած են հայոց առաջին կաթողիկոս Գրիգոր Լուսաւորիչի թոռան տապանաքարը: Այս մասին թելեկրամի իր էջին գրած է քաղաքագետ Էտկար Էլբակեան:

«Իսկ մարդիկ կը զարմանան, որ պատմութեան դասագիրքերը վատ են, ազգային չեն:

Թշնամիին ծրագիրները կ'իրականացուին ինչպէս գետնի վրայ՝ ֆիզիքական կեանքի մէջ, այնպէս ալ սուրբերու նկատմամբ՝ հոգեւոր կեանքի մէջ:

Ինչո՞ւ իշխանութիւն մը, որ թշնամիին յանձնած է Մետրոպ Մաշտոցի կողմէ հիմնուած առաջին դպրութեան վայրը՝ Ամարասը, ուր ամփոփուած են առաջին կաթողիկոսի թոռան մատուցները, թոյլ պիտի տայ, որ հայոց եկեղեցւոյ պատմութիւն առարկան դասաւանդուի կամ ազգային պատմութեան այլ դրուագներ դասաւանդուին:



ԶԷ՞ որ այդ պարագային հարց կը յառաջանայ՝ «Թէ ի՞նչ եղաւ, ո՞ր կորսուեցաւ այս ամենը»:

Կը յիշէ՞ք, պոլշեիկեան շրջանի դասագիրքերը ինչպէս կը շրջանցէին ազգային դեկավարներուն դերը պատմութեան մէջ եւ ամէն ինչ կը վերագրէին ժողովրդական գանգուածներուն: Հակառակը ընելու պարագային հարց կը յառաջանար, թէ ինչպէ՞ս, ուրկէ՞ եւ ի՞նչ գումարներու հաշուոյն յառաջացաւ պոլշեիկեան դեկավարութիւնը՝ ոչնչացնելով ամբողջ ռուսական կայսրութիւնն ու քաղաքակրթութիւնը:

Նոյն ձեւով ալ Հայաստանի տե-ֆաքտո իշխանութիւնները, թշնամիին հետ ձեռք ձեռքի տուած, պիտի ջանան ամէն ձեւով խեղաթիւրել հայոց պատմութիւնն ու հայկական հետքերը, որպէսզի հարց չծագի, թէ ինչպէ՞ս եղաւ, որ իրենց իշխանութեան ընդամենը 5 տարուան մէջ թշնամիին տիրացաւ ամբողջ Արցախին, ուր 5000 տարի հայեր կ'ապրէին:

Ասիկա պիտի տեսնէ այնքան ատեն որ Հայաստանի մէջ կը բացակայի ազգային իշխանութիւնը...», գրած է ան:

իր սրտի խօսքը:

Ան իր խոնարհութիւնը յայտնեց բոլոր ննջեցեալ ծառայողներուն առջեւ, ապա մէքբերեց ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին ծառայութեան մասին ըսած խօսքը. «Մեր մեծութիւնը, պատիւը եւ փառքը՝ մեր ընծեռած ծառայութեան մէջ է»: Ուստի, ան հրաւիրեց ներկաները գիտակից կերպով ծառայելու, օրինակ քաղելով մեր Նախնիներէն, որպէսզի ներկայ մարտահրաւերներուն դիմաց կարողանանք մեր ուսերուն դրուած պարտականութիւնը լաւագոյնս ի կատար ածել:

Պոփուլյու

ԿԱՌՈՒՑՈՂ ԵՒ ԶԱՆԴՈՂ ՅԵՂԵՐ



Մարուշ Երամեան

Կամ՝ ստեղծող ազգեր եւ յափշտակող ցեղեր: Յեղերն ալ կ'ունենան իրենց հաւաքական անհատականութիւնը, կամ խառնուածքը, կամ յատկութիւնները, մանաւանդ երբ իրենք զիրենք մշակած չեն եւ կը շարունակեն կենալ քաղաքակրթութեան ամենացած աստիճանին վրայ:

Անշուշտ պէտք է միշտ ի մտի ունենալ, որ քաղաքակրթութիւնը միայն ու մանաւանդ արտաքինը չէ, որովհետեւ կան կարգ մը ցեղեր, որոնք վըրտահած իրենց արտաքին «քաղաքակրթութեան» (ճիշդ այդ ըսել ուզեցի՝ շեշտը կրթութեան վրայ դնելով), կ'ուզեն հաւատացնել աշխարհին, թէ իրենք եւս քաղաքակրթ են այնքան, որքան ըսենք Ֆրանսան կամ Անգլիան:

- Պահ մը շուրջերնիս դիտենք՝ ամեն կողմ քանդում է. Սուրիան՝ ֆիզիքապէս քանդուած. Լիբանանը՝ ֆիզիքապէս եւ տնտեսապէս քանդուած. Արցախի մէջ իրականացեր է մեր ամենէն ծանր մոճաւանջը. Ասիկա մեզի՝ հայերուս համար: Արաբական աշխարհին մէջ՝ Իրաքը, Սուրիան, Լիբանանը, Լիպիան գոհ են չեն գիտեր ինչ դաւադրութեան:

Եթէ մտածենք որ այս բոլորը քաղաքականութիւն է, պիտի տեսնենք թէ աշխարհի մնացեալ երկիրներն ալ քանդուած են, այս անգամ բնութեան աղետներէն՝ Մաուիի (Յուսայ) իրդեհներէն սկսեալ մինչեւ Մարոքի երկրաշարժը. աղետներ, որոնց բնոյթը մեծ հարցադրումներ ստեղծած է այսօր մարդոց միտքերուն մէջ:

Քաղաքական տակնուվրայութեան եւ բնութեան աղետներու այս գուգորումը ուզողպալուծի՞ն է:

Անդրադարձայ որ երբ մենք ամեն օր, ամեն ժամ ու պահ դիմատետրին վրայ կը գրենք, հաւատալով որ ա՛յս ալ պայքարի ձեւ մըն է, ու կը գրենք մանաւանդ հայերէն, իրենք, այդ քանդող ցեղերը, որոնք գոնէ հայերէն կարդալ չեն գիտեր, չեն իմանար գրուածը. իսկ երբ անգլերէն կը գրենք, անգլերէն գիտցող օտարները չեն ուզեր կարդալ, չեն հետաքրքրուած թէ ի՞նչ կը գրենք, ի՞նչ կ'ըսենք:



Յետեւաբար, ապարդիւն է այսքան ներոյժ վատնել դիմատետրին մէջ հայերէն գրելով այսօրուան հարցերուն, մեր ազգին եւութեան կիճակին մասին:

Եթէ իրապէ՛ս ըսելիք ունինք, եթէ մեր ըսելիքը հիմաւորուած է հանդարտ դատողութեան եւ կիրթ ներկայացումի վրայ, անպայմանօրէն – կը յուսանք – տեղ կը հասնի, կը գտնէ միջազգային ընթերցող ա՛յն հասարակութիւնը, որուն ձայնը կրնայ բան մը փոխել կացութեան վիճակէն: Յարկաւոր է թշնամիին հետ ի՛ր լեզուով խօսիլ՝ ոյժով = զէնք + դրամ. կամ՝ դիւանագիտութեամբ, քաղաքականութիւն խաղալով. միայն այդ պարագային է որ թերեւս արդիւնքի մը հասնինք:

Օրինակ՝ Իսրայել տակաւին ուշքի չեկած իր կրած պաղտատիւնեան ծանր յարձակումներէն, այդ իրարանցումին մէջ մտածեց նաեւ Սուրիոյ՝ Դամասկոսի եւ Յալէպի օդակայանները կրկին մմբակոծել եւ անգործածելի դարձնել, կ'երեւի վախճալով որ Սուրիան կրնայ օգնութեան հասնիլ Պաղեստինի պայքարին, մոռցած որ երկիրը դեռ իր վերքերէն չէ բուժուած տակաւին ... Եթէ թոյլ տան, եթէ հանգիստ ձգեն երկիրը իր ժողովուրդին ...

Բայց ուշադրութիւն դարձուցա՞ծ էք, թէ վերջերս դէպքերը ինչպիսի՛ հզօր արագութեամբ կ'ընթանան, կարծես չեն ուզեր աշխարհի մար-

դոց առիթ տալ, որ մտածեն անոնց մասին, հասկանան թէ «բանն ինչու՞մն է», նախապատրաստուին:

Մեր ամբողջ կենսքին ընթացքին կառուցող եղեր ենք, եղեր ենք գեղեցիկին սիրահար եւ վեհին՝ գործակից: Եւ կողոպտուեր ենք, շարդուեր ենք, վտարուեր ենք մեր իսկ երկրէն, բայց ...

Տարօրինակ ազգ ենք՝ ամեն անգամ վերընծիւղուեր ենք ու շարունակուեր ենք ոչ միայն ապրիլ, այլեւ փայլիլ հոն, ուր որ գացեր ենք ապրելու:

Տասնամեակ մը առաջ այս բոլորը հպարտութեամբ պիտի գրէի. այսօր ցաւով եւ քիչ մըն ալ ամօթով կը գրեմ:

Միջանկեալ պատմեմ, որ այն օրերուն, երբ Յակոբ Միքայելեան Յալէպի մէջ Միջին Արեւելքի ներկայացուցիչն էր դեղագործական ICI անգլիական ընկերութեան, ատենը անգամ մը անգլիացի մասնագետներ կը հիւրընկալէր: Այդ անգամուն ալ զուգահեռաբար է, որ թատրոնի պիտի երթար, եւ եկած հիւրը հետը տարեր է: Բեմադրութիւնը Թումանեանի երեք թէ չորս հեքիաթներն են եղեր: Ներկայացումը դիտելէ ետք հիւրը դարձեր է Միքայելեանին:

- Ձեր հեքիաթներուն բոլոր հերոսներն ալ անխելք են ...
- Պատկերացուցէ՛ք «Անխելք Մարդը» կամ «Կիկոսի Մահը» ...
- Եթէ անդրադառնանք, իրաւ է մարդուն դիտարկումը:
- Պարզապէս շատ բարի են, – ըսեր է Միքայելեան:
- Կարելի է բարի ըլլալ բարիին, ազնիւին, քեզ հոգացողին հանդէպ, բայց թշնամիի՞ն:

«Մէկ երեսը ապտակողին միւս երեսը դարձուեր» կ'ըսէ Աւետարանը մեր Տէր Յիսուս Զրիստոսի անունով: Բայց հայ քահանային տուած պատասխանին նման, երբ զինք ապտակողը լաւ մը ծեծեր է, որովհետեւ՝ «Յիսուս չըսաւ թէ միւս երեսը ապտակելէն ետք ի՞նչ պէտք է ընես. Աստուած մեզի խելք տուեր է որ մտածենք ... »:

Այս բոլորը ըսի եւ պատմեցի, որպէսզի ըսեմ, թէ ինչու՞նչ այսօր ամօթով կը նայիմ մեր «վերընծիւղող ազգ»-ին. որովհետեւ կարելի չէ՛ այսքան համբերող ըլլալ, այսքան միամիտ ըլլալ տրուած խոստումներուն հաւատալու չափ, այսքան անգամ կրկին ու կրկին նոյն փոսը իյնալ:

Բայց հայու արիւնս չ'ընդունիր այս իրողութիւնը եւ կը պատճառաբանէ՝ այդ բոլոր դաւաճանները տոլարով գնուած մարդիկ ըլլալու են ...

Ինչպէ՞ս ընդունիմ, որ ազգս, այսքան կենսափորձէն ետք, շարունակէ շարդուիլ, իր հողերէն վտարուիլ ...

- Կա՞ն մեզի չափ եւ մեզի նման կենսափորձ ունեցող ազգեր:
- Կա՞ն, դո՛ւք ալ գիտէք թէ ո՛ր ազգերը: Եւ ի՞նչ կ'ընեն այդ ազգերը:

Մէկը իր ողջակիզումէն ետք կ'ըսէ՝ «Ա՛յ երբեք, ա՛յ թնայ ... »: Եւ կ'ընէ:

Միւսը ըսելու պէտքն իսկ չ'զգար, այլ ըրած է, կ'ընէ եւ կը շարունակէ ընել, իրաւամբ «բացատրելով» աշխարհին, թէ «ազատութիւն կամ մահ» ըսուածը լոգ ունգ չէ միայն:

«ԳԱՆՁԱՍԱՐ»

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԿԱՉՍ

Խմբագիր՝ Զարմիկ Զիւլբոջեան-Պողիկեան
 Սրբագրիչ՝ Նուշիկ Սողոմեան-Առաքելեան
 Զեւաւորող՝ Յովսէփ Զալոյլեան
 Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան
 Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարէն Պապեան-Աղայեկեան
 Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պողոսեան
 Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիւլբոջեան
 Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան 0957 953 811

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով, կապ հաստատելով թերթիս հաշուապահին հետ:

www.kantsasar.com
 www.kantsasar.com
 www.kantsasar.com

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



Խոյ

Այս շաբաթ մեծ անակնկալ մը պիտի ունենայք եւ յաջողութեան պիտի հասնիք: Լաւատես եղէ՛ք:



Ցուլ

Մեծ ջանք պէտք է թափէք, որպէսզի յաջողիք: Մի՛ մոռնաք նաեւ ձեր առողջութեան ալ հոգ տանիլ:



Երկուորեակ

Ձեր վաստակը պիտի արժեւորուի եւ դուք առաւել եւս պիտի խորանայք ձեր մասնագիտութեան ոլորտէն ներս: Անկուն կամքով յառաջացէ՛ք:



Խեցգետին

Ձեր ընկերները միշտ ալ կ'աջակցին ձեզի՝ ձեր ծրագիրները իրականացնելու համար: Գնահատեցէ՛ք զանոնք եւ հոգատարութիւն ցուցաբերեցէ՛ք անոնց նկատմամբ:



Առիծ

Մի՛ խոստանաք, եթէ պիտի չկարենաք կատարել ձեր խոստումները: Բարեկամներ ձեր երջանկութիւնը կ'ակնկալեն: Բարեսրտութեամբ վարուեցէ՛ք անոնց հետ:



Կոյս

Ձեր թերահաւատութեան շնորհիւ պիտի տագնապիք: Հեռաւոր երկրէն ուրախ լուր մը պիտի ստանաք եւ քիչ մը մխիթարուիք:



Կշիռ

Լաւատեսութիւնը ձեր առանձնաշնորհումներէն մէկն է: Ձեր ընկերներուն հիացումին պիտի արժանանաք եւ գնահատուիք:



Կարիճ

Կարեւոր փոփոխութիւններ պիտի ունենայք ձեր կեանքին մէջ: Համբերատար եղէ՛ք: Աւելի լաւ պայմաններ պիտի դիմագրաւէք:



Աղեղնաւոր

Ձեր ծանօթութիւններուն շրջանակը պիտի ընդլայնի: Միտային արկածախնդրութիւն մը պիտի թարմացնէ ձեր հոգին: Չուարճացէ՛ք:



Այծեղջիւր

Դուք միշտ կը ձգտիք բարելաւելու ձեր գործին պայմանները: Երկար ժամանակէ ի վեր սպասուած լուր մը պիտի առնէք եւ հոգեպէս խաղաղիք:



Ձրիս

Հոգեկան բարդ տագնապներէ ետք երջանկութիւնը ի վերջոյ ձեր դուռը պիտի թակէ: Պատրաստուեցէ՛ք:




Ձուկ

Ձեր յառաջխաղացին գարկ տուէ՛ք եւ հաստատակամ քայլերով դէպի յառաջ սուրացէ՛ք: Մի՛ երկմտիք: Ինքնավստահութիւնը յաջողութեան բանալին է:



ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՏԱՆՏԻԿՆՈՋ



1. - Տապկոցի ձեթին դգալ մը քացախ աւելցնել, որպէսզի ձեթին ներծծուի Նուազի:
2. - 2 ա. դգալ շաքար աւելցնել պանիրին մէջ, որպէսզի չմզլոտի:
3. - Բրինձը ձիւնասպիտակ ըլլալու համար քանի մը կաթիլ կիտրոնի հիւթ աւելցնել անոր մէջ, իսկ լաւ չեփելու պարագային ջուր չաւելցնել, այլ զայն փայլաթիթեղով ծածկել եւ մարմանդ կրակի վրայ եփել:
4. - Հաւը եփելէն մէկ ժամ առաջ քացախի մէջ պահել, որպէսզի դիրութեամբ եփի:
5. - Սմբուկին վրայ ալիւր ցանել տապկուելէն առաջ, որպէսզի քիչ քանակութեամբ ձեթ ծծէ:
7. - Կարկանդակին մակերեսը այրելու պարագային քերթել զայն, վրան փոշի շաքար ցանել եւ կրկին փուռ վերադարձնել:
8. - Կիտրոնէն առաւտ հիւթ ստանալու համար զայն տաք ջուրի մէջ պահել, մօտաւորապէս կէս ժամ:



«ZEBRA» ԿԱՐԿԱՆԴԱԿ

Բաղադրութիւն

- 2 1/2 գաւաթ ալիւր
- 2 1/2 թ. դգալ B.P.
- 1/2 թ. դգալ աղ
- 1/2 գաւաթ կարագ
- 1 1/2 գաւաթ փոշի շաքար
- 3 հաւկիթ
- 1 թ. դգալ վանիլ
- 1 գաւաթ կաթ

- 1/4 գաւաթ գագաու (cocoa)
- 2 ա. դգալ կաթ

Պատրաստութիւն

1. - Փուռը 180 ցերմաստիճան տաքցնել եւ կաղապարը իւրով պատել:
2. - Խորունկ ամանի մը մէջ չոր նիւթերը խառնել (ալիւրը, B.P.-ն ու աղը):
3. - Ուրիշ ամանի մը մէջ կարագն ու շաքարը հարել, մինչեւ որ քրէմի վերածուին: Յետոյ մէկիկ մէկիկ աւելցնել հաւկիթները, ապա՝ վանիլը:
4. - Բոլոր նիւթերը լաւապէս խառնել իրարու:
5. - Խառնուրդը երկու հաւասար մասերու բաժնել:
6. - Առաջին կէտը սպիտակ պահել, երկրորդ կէտին աւելցնել կաթն ու գագաուն եւ լաւապէս խառնել:
7. - Կաղապարին կեդրոնէն փոխնի փոխ սկսիլ լեցնել իւրաքանչիւր խառնուրդէն դգալ մը, մինչեւ որ ամբողջութեամբ սպառի:
8. - Նախապէս տաքցած փուռին մէջ եփել զայն 30-35 վայրկեան:
9. - Հալած տուրմով գարդարելէ ետք սպասարկել:



Մարզական



Ռաֆֆի Սիկսիսյան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՑ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

-Ապու Տապիի մեջ տեղի ունեցած արաբական երկիրներու մրցաշարքին, Սուրիոյ լողի հաւաքականի մարզիկ Ինանա Սուլեյման 800 եւ 400 մետր ազատ լողի մրցանակին յաջողեցաւ ձեռք ձգել ախոյեանութիւնը եւ տիրանալ երկու ոսկի մետալի: Ինանան յաջողեցաւ նաեւ նոյն արդիւնքը արձանագրել 1500 մետր ազատ լողի մրցումին եւ դարձեալ ախոյեան հանդիսացաւ: Տղոց կազմէն Այման Բլիէն եւ Ուսամա Թարապուլսին գրաւեցին երկրորդ դիրքը:



-Սուրիոյ ֆուտպոլի ախոյեանութեան մրցումներու շրջածիրին մէջ, Յալէպի Ահլին իր դաշտ հիւրընկալեց Դամասկոսէն ժամանած Ուահտէն: Խումբերուն հանդիպումը իր ավարտին հասաւ 0 - 0 հաւասարութեամբ: Յոսի մէջ Բարամէն 2 - 1 արդիւնքով գիշեցաւ Յըթինին: Նոյն արդիւնքով Թշրինը յաղթեց Յուրիէին, իսկ Ուասպէն 2 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Ճէշը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՌԵԱԼ ՊԱՐՍԵԼՈՆԱՅԻՆ ԱՈՍՁԻՆ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԱՐՁԱՆԱԳՐԵԼ ՏՈՒՄ

Սպանիոյ առաջնութեան 11-րդ փուլի մրցումներուն, ախոյեան Պարսելոնան իր դաշտէն ներս ընդունեց փոխախոյեան Ռեալ Մատրիտը եւ կրեց այս տարեշրջանի իր առաջին պարտութիւնը 2 - 1 արդիւնքով: 6-րդ վայրկեանին, հանդիպումի հաշիւը բացուած յայտարարեց քաթալոնեական խումբի եւ Գերմանիոյ հաւաքականի կիսապաշտպան Իլկայ Կունտոյան, որ օգտուելով Ռեալի անստրիացի պաշտպան Տեյվիտ Ալպայի սխալէն, արձանագրեց կազմին առաջին



կոլը: Իտալացի Գարլօ Անշելոթիի գլխաւորած խումբը 68-րդ վայրկեանին հաւասարութիւնը նշանակեց շնորհիւ 20-ամեայ անգլիացի կիսապաշտպան Ճուտ Պելլիքեմի: Նախքան հանդիպումի ավարտը, նոյն խաղացողը կրկնապատկեց արդիւնքը եւ յաղթանակը շնորհեց արքայական ակումբին: Նշենք, որ Ռեալ 28 կետով գլխաւորեց աղիւսակը, նոյն արդիւնքով Ճերոնան շարունակեց մրցակցութիւնը, իսկ Պարսելոնան երրորդ դիրքին արժանացաւ՝ 24 կետով:

ՄՈՏՐԻՉ ԿԱՏԱՐԵՑ ԻՐ 500-ՐԴ ՄՐՑՈՒՄԸ ՌԵԱԼԻՆ ՅԵՏ

38-ամեայ խրուաթ կիսապաշտպան Լուքա Մոտրիչ 500-րդ հանդիպումը կատարեց Ռեալ Մատրիտի կազմին հետ: Սպանիոյ առաջնութեան 11-րդ փուլի խաղին, արքայական խումբի մարզիկ Բլասիքօ մասնակցեցաւ եւս իր 500-րդ մրցումին, ուր կրցաւ կատարել մէկ կոլային փոխանցում: Մոտրիչ 2012-ին Լոնտոնի Թոթենհամէն տեղափոխուեցաւ Ռեալ, որուն հետ իր պայմանագրութիւնը կ'ավարտի այս մրցաշրջանի վերջաւորութեան:



ԽԱԶՔԱՌ (ՄԽ 462)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Հորիզոնական

- Յակոբ Օշականի պատմութեանը հատորը: Տառի մը անունը:
- Չօրավար Դրոյի շիրմին վայրը: Արեան շրջագայութեան խողովակ:
- Կոթնելու տեղ:
- Հակառակ՝ ականջի օղ: Տառի մը անունը: Որթատունկի պարտեզ:
- Տղամարդ: Տառի մը հարեանները:
- Հայերէն գիրերու ցանկը:
- Եւս: Որդի (մանչ կամ աղջիկ):
- Վիթխարի: Կրկնուած բաղաձայններ: Արական անուն:
- Սիրուած անձ: Եական բայ:
- Վիքթորիա լիճէն սկիզբ առնող գետ: Կերպաս հիւսող ասեղ:
- Հայկական ժողովրդային նուագարան: 16 էջով տետր:
- Հակառակ՝ իգական անուն:

Ուղղահայեաց

- Գորով, գուրգուրանք:
 - Բաղաձայն տառեր: Հակառակ՝ իրերայաջորդ տառեր: Լեցուն:
- Հայկական մականուններու վերջավանկը:
- Անդրանիկ Ճառուկեանի խմբագրած թերթը: Ցեխ:
 - Արեւ: Ձայնակիչ: Ձայնաւոր տառեր:
 - Անսկզբնատառ՝ իգական անուն: Հակառակ՝ անձնական դերանուն:
- 2400:
- Հնութիւններ պեղող: Տառի մը անունը:
 - Տառի մը անունը: Ժողովրդային ասացուածքը կ'ըսէ. «Ամէն բարեւ տուող է»:
 - Փոքր անտառ:
 - Հակառակ՝ հարսին հայրը: 7001: Վայրկեան:
 - Խառնատառ՝ կառոյցի մը կից պարապ տարածութիւն: Հակառակ՝ իրերայաջորդ տառեր:
 - Ուտանաւորի տողերուն նմանահնչիւն վերջաւորութիւնը: Հակառակ՝ յոգնակերտ մասնիկ: Յաւի ճիչ:
 - Փոքրացնող մասնիկ: Հաց:

ԽԱԶՔԱՌ (ՄԽ 461)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	մ	ի	կ	լ	խ	ի	ն	դ	ա	ր	տ	
2	ա	ւ	ա	ր	ա	ւ			լ	ւ	է	ի
3	ր		հ	ն	ն	ա	կ		ւ	է	կ	
4	տ	ա		դ	է	ւ	ւ	ա	ւ	ն		
5	ա	ն		ր	ա	կ		ւ	ա	ւ	ն	
6	կ		տ	ա	դ	ա	ր		ի	ւ	ա	
7	է		զ	ա	ր	կ	կ	կ		ր		
8	ր	զ	է		տ	ա	ն	ձ	է	ն	ի	
9	տ	ա	տ	ր	ա	կ		ի	ր	ա	ն	
10			ա	ն		ր	տ		տ	ց		
11		ի	ւ	լ	ր	ի	ն		է	ր	ա	
12	ւ	է	ր			լ	ա	լ		ա	ն	

ԼՈՒՐԵՐ

Երկուշաբթի 6/11	Երեքշաբթի 7/11	Չորեքշաբթի 8/11	Հինգշաբթի 9/11	Ուրբաթ 10/11	Շաբաթ 11/11	Կիրակի 12/11
13° 28°	12° 27°	13° 27°	12° 27°	13° 26°	13° 25°	10° 25°



ԱՐՅԱՆԻ ՈՒ ԿԱՉՉԱՅԻ...

Մկիզբ՝ Էջ 1

Նամին և իրական ու մարդկային վնասներ կը կրէ, ինչ որ ուժերու հաւասարակշռութիւնը կը խախտէ եւ անել կացութեան կը մատնէ Իսրայէլը, վերջինս մղելով անմարդկային արարքներու», ըսաւ Ապտուլ Յաք:

Ապա խօսք առաւ Արաբ Աւետարանական Համայնքի պետ Իպրահիմ Նսիր, որ ըսաւ. «Ողջոյնի խօսք կ'ուղղենք Հայէպէն, որ ահաբեկութեան ծրագիրը շրջեց: Ու այնպէս ինչպէս, Սուրիոյ Նախագահին իսկ խօսքով, Հայէպի ազատագրութեան մարտերը պատմութիւնը փոխեցին, Նոյնպէս ալ Կազգայի մէջ պաղեստինցիներուն մղած պատերազմը պիտի փոխէ պատմութիւնը: Այստեղ ենք հաստատելու, որ Կազգայի պատերազմը յըստակօրէն բացայայտեց ծաւալապաշտական եւ թշնամական Նկրտումներ ունեցողները: Փաստօրէն ան որ 1915-ին մեր Նախահայրերը ցեղասպանութեան ենթարկեց Օսմանեան կայսրութեան մէջ, Նոյն թշնամին է, որ Արցախի մեր քոյրերն ու եղբայրները ցեղասպանութեան ու բռնի տեղահանման ենթարկեց, Նոյն թշնամին է որ Սուրիոյ մեր զաւակները սպանեց ու այսօր Պաղեստինի մէջ մեր եղբայրներն ու քոյրերը կը սպաննէ: Նոյն թշնամին է, սիրոնական շարժումը, իսկ պատճառը այն է, որ մեր ժողովուրդները մշակոյթ ունին, ինքնութեան համար կը պայքարին: Մենք խաղաղասէր ժողովուրդներ ենք, սակայն պիտի պաշտպանենք մենք մեզ ու թոյլ պիտի չտանք որ մեզ վերացնեն: Այսօր կը հաստատենք, որ Պաղեստինի եւ Արցախի դատերը մեր բոլորին դատերն են, անոնք արդարութեան, ազատութեան համար յառաջ մղուող դատեր են»:

Գեղարուեստական յայտագիրով Մարինէ Մարգարեան երգեց «Արձալէ՛ Փամփուշտոյ» արաբերէն երգը, Աննա Սաղապազարեան մեներգեց «Արցախ, իմ Տուն» երգը, Անի Պօղիկեան (դաշնամուր) եւ Տեսիլ Սարեան (ջութակ) նուագեցին «Կեանք ու Կռիւ»-ը, իսկ Արա Մուրաֆեան ասմունքեց իր հեղինակած «Հայրենիքի Յարութիւնը» արաբերէն քերթուածը:

Այնուհետեւ խօսք առին Պաղեստինեան «Ֆաթի» ապստամբութեան շարժման պատասխանատուն, Հայէպի կրօնական կալուածներու տնօրէնութեան կողմէ շէյխ դոկտ. Ճեմէլ Համմէշը, Սուրիական Ազգային Հասարակական Կուսակցութեան ներկայացուցիչը, Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան Ժիրայր Րէսեսանը եւ «Պասա» կուսակցութեան Հայէպի քարտուղարին ներկայացուցիչը, որոնք լուսարձակի տակ առին Ատրպէյճանի կողմէ Արցախի հայութեան դէմ ի գործ դրուած ցեղասպանութիւնը եւ բռնի տեղահանումն ու հայկական Արցախի բռնագրաւումը, Պաղեստինի ժողովուրդին ցեղասպանութիւնն ու բռնի տեղահանումը իսրայէլեան ուժերուն կողմէ, վեր առին երկու ժողովուրդներուն իրենց պատմական հողերուն վրայ

ազատ ապրելու իրաւունքն ու պահանջեցին մարդկային իրաւունքներու անուսով հանդէս եկող միջազգային կազմակերպութիւններէն դիտորդի դերին մէջ մտալով մեղաւկից ջլլալ տեղի ունեցող բռնարարներուն, որովհետեւ բռնարարները անպատիժ պիտի չմնան, ու այս ժողովուրդներու զաւակներն ու թոռները պիտի ժառանգեն պահանջատիրութեան ջահը:

Յուցադրուեցաւ Արցախի ու Պաղեստինի մասին տեսերիզ մը: Զօրակցական հաւաքը փակուեցաւ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի եզրափակիչ խօսքով:

Մակար սրբազան դիտել տուաւ, որ որոշ ժողովուրդներ հեռանալով Աստուծոյ պատուիրաններէն, սպանելով իրենց նմանը՝ մարդը, եւ յանուն իրենց սիրական շահերուն Սատանային հետ դաշնակցելով պատմական իրականութիւններ շրջեցին, ցեղասպանութիւններ իրագործեցին ու ժողովուրդներ իրենց հայրենիքներէն վտարանդի դարձուցին: Արցախի եւ Կազգայի մէջ պատահածները չեն տարբերի 1915-ի Հայոց ցեղասպանութենէն: «Ո՛ր են միջազգային կազմակերպութիւնները, ո՛ր է ԻՆՏԵՆՏ-ը, ո՛ր են խաղաղութեան, մարդկային իրաւունքներու անուսով հանդէս եկող կազմակերպութիւնները: Անո՞թ բոլորին: Կը զօրակցինք Պաղեստինի մեր քոյրերուն եւ եղբայրներուն, կը զօրակցինք արցախահայութեան: Կը դատապարտենք բոլոր բռնարարները, որոնք կը քանդեն խաղաղ գոյակցութեան հիմքերն ու ատելութիւն կը սերմանեն աշխարհի մէջ՝ շրջանցելով արդարութիւնը, խաղաղութիւնն ու մարդու իրաւունքները: Իրաւացի էր Նահատակ հայ բանաստեղծ Սիսմանթօսն երբ կ'ըսէր. «Ով մարդկային արդարութիւն, թող ես թքնեմ քու ճակտին»... Կը հաւատանք վերջապէս որ արդարութեան համար մաքառող ժողովուրդները ուշ կամ կանուխ պիտի վերատիրանան իրենց իրաւունքներուն, քանի որ պիտի պայքարին անոնց համար ու այդ պայքարի շունչը վառ պիտի պահեն սերունդէ սերունդ: Մեր երախտագիտութիւնը կը յայտնենք այստեղ գտնուողներուն եւ անոնց զօրակցութեան Արցախի եւ Պաղեստինի ժողովուրդներուն, ինչպէս նաեւ այս ձեռնարկը կազմակերպողներուն: Թող Աստուած պահէ սուրիական հայրենիքն ու անոր իմաստուն Նախագահ Պաշտարալ-Ասատը: Թող Աստուած պահէ սուրիական բանակը եւ օգնելով յաղթանակի առաջնորդէ Արցախի ու Պաղեստինի իրաւատէր ժողովուրդները», ըսաւ սրբազանը:

Աւարտին Սուրիոյ Հայ Դատի Յանձնախումբի ատենապետ Ծերուն Գահուէճեան ընթերցեց Բերիոյ Հայոց Թեմին եւ անոր մարմիններուն կողմէ դատապարտագիր մը, ուր կը դատապարտուէին թրքական, ատրպէյճանական եւ սիրիական ցեղասպանական արարքները հայ եւ արաբ ժողովուրդներուն դէմ ու միջազգային ընտանիքին կոչ կ'ուղղուէր՝ պատժելու բոլոր պատասխանատուները: Դատապարտագիրը ստորագրուեցաւ նաեւ հաւաքին մասնակիցներուն կողմէ եւս: